ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.02.2025թ                                                                                     ք. Երևան

2025թ. փետրվարի 24-ին, ժամը 12.00-ին Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած «Մալկես» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՄԱԼԿԵՍ» տեղամասում արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ:

Հանրային լսմանը մասնակցում էին՝ Քաջարանի համայնքապետի 1-ին տեղակալ՝ Զոհրապ Առաքելյանը, Լեռնաձորի վարչական ղեկավար՝ Ստեփան Պետրոսյանը, համայնքապետարանի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ Գարեգին Գաբրիելյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանը, առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյանը, «ՄԱԼԿԵՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հայկ Առաքելյանը, նախագծող՝ Սահարուն Գևորգյանը, համայնքի բնակիչներ:

Զ. Առաքելյանը ներկայացնելով հանրային լսման նպատակը՝ խոսքը փոխանցեց Հ. Մեսրոպյանին: Հ. Մեսրոպյանը ներկայացնելով հանրային լսման մասնակիցներին, նշեց, որ «Մալկես» ՍՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն է ներկայացվել, համայնքի վարչական տարածքում գտնվող Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդների հանքավայրի «ՄԱԼԿԵՍ» տեղամասում հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, ներկայացնելով, որ այժմ իրականացվում է 2-րդ հանրային լսումը, ինչի վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետում, իրականացվել է ծանուցում: Փորձաքննությանը մացնակցել են շրջակա միջավայրի նախարարության տարբեր ստորաբաժանումներ, մասնագիտական կառույցներ:

Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն հայցվող 0.4959 հա տարածքում ներառված են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողեր, իսկ ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն հայցվող տարածքը ամբողջությամբ ներառված են համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի սահմաններում: Այնուհետև ներկայացվեց որոշ տեղեկություններ բացահանքի պաշարների, դիրքի, սպասվելիք բացասական ազդեցությունների և այդ ազդեցությունների մեղմման նպատակով ընկերության կողմից առաջարկվող միջոցառումների վերբերյալ: Նշվեց, որ ըստ հաշվետվության հայցվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել, չկան պատմության, բնության հուշարձաններ: Ինչպես աշխատանքների ընթացքում այնպես էլ ավարտից հետո նախատեսվում են օդի, հողերի, կենսամիջավայրի մշտադիտարկումներ:

Ս. Գևորգյանը նշեց, որ հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվել են «Մալկես» ՍՊԸ-ի սեփական միջոցների հաշվին: Կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում հաստատվել են ավազակոպճային խառնուրդի պաշարներ 7421մ$^2$ մակերեսով տեղամասում: Բայց, քանի որ պաշարների հաշվարկման եզրագծում, ըստ կադաստրային քարտեզների, ընդգրկվել են և 2461.3 մ$^2$ ջրային հողեր, համայնքը ընկերությանը

հանքարդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով նախագծման համար տրամադրել է 4959.7մ² մակերեսով տարածք, որն ընդգրկված է համայնքային սեփականության գյուղատեսական նշանակության այլ գյուղ հողերի սահմաններում, որի վերջնական ճշտման նպատակով ընկերությունը նորից դիմել է կադաստրի կոմիտե:

Գ. Գաբրիելյանը բարձրացրեց հարցեր՝ կապված Ողջի գետից տեխնիկական նպատակներով իրականացվելիք ջրառի, ընդհանուր օգտագործման ճանապարհների պահպանության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների մեղմանը ուղված միջոցառումների վերաբերյալ:

Հարցերին Ս. Գևորգյանի և Հ. Առաքելյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ամփոփիչ խոսքում Քաջարանի համայնքապետի 1-ին տեղակալ Ջ. Առաքելյանը և Լեռնաձոր բնակավայրի վարչական ղեկավար Ս. Պետրոսյանը նշեցին, որ համայնքը առարկություն չունի նշված գործունեության իրականացման վերաբերյալ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«ՄԱԼԿԵՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Սահարուն Գևորգյան